ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԻԶՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Մ. ՈՍԿԱՆՅԱՆ

Մինչև մարքսիզմի երևան գալը գիտության մեջ գոյություն ունեին զանազան թյուր կարծիքներ հասարակության զարգացման պրոցեսում աշխարհագրական միջավայրի դերի ու նշանակության մասին։ Հասարակության զարգացման հարցերով զբաղվողները կա՛մ բոլորովին անտեսում էին աշխարհագրական միջավայրի դերը և կա՛մ խիստ գերագնահատում էին այն, համարելով հասարակական զարգացման հիմնական շարժիչ ուժը։

Աշխարհագրական միջավայրը, հատկապես երկրի կլիմայական պայմանները, հասարակության զարգացման վճռական գործոն էին համարում դեռևս անտիկ աշխարհի մտածողներ Հիպոկրատը, Պլատոնը, Արիստոտելը։ Վերջինս, օրինակ, գտնում էր, որ հելլենները, ապրելով բարեխառն կլիմայի պայմաններում, օժտված են և՛ արիությամբ, որն իրը հատուկ է միայն հյուսիսի ցուրտ երկրների բնակիչներին, և՛ խելքով ու սրամտությամբ, որոնք, ըստ նրա, հատուկ են տաք երկրների մարդկանց։ Հենց այդ պատճառով էլ, Արիստոտելի կարծիքով, հելլենները հաճույքով զբաղվում են քաղաքական կյանքով և ի վիճակի են իշխելու ուրիշ ժողովուրդների վրա։ Այսպիսի դատողություններով ստրկատիրական հասարակարգի գաղափարախոսները ձգտում էին հիմնավորել մի ժողովրդի գերիշխանությունը այլ ժողովուրդների վրա։

Հասարակության զարգացման գործում աշխարհագրական գործոնների վճռական նշանակության մասին ուսմունքը, այսպես կոչված աշխարհագրական դետերմինիզմը, ստեղծվում ու լայն տարածում է ստանում աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանից հետո, երբ Եվրոպայում արագ թափով սկսեցին զարգանալ կապիտալիստական հարաբերությունները և նախկինում չտեսնված չափերով աճեց բնական հարստությունների օգտագործումը զարգացող բուրժուական էկոնոմիկայի կարիքների համար։ Միջնադարյան սխոլաստիկայի ու աստվածաբանության դեմ ուղղված նոր, համեմատաբար առաջադիմական սոցիոլոգիական ուսմունքները, այդ թվում առաջին հերթին աշխարհագրական դետերմինիզմը, փորձում էին հասարակության զարգացումը բացատրել՝ ելնելով օբյեկտիվ, բնական և ո՛չ թե աստվածային դրդապատճառներից։ Այս էր աշխարհագրական դետերմինիզմի առաջադիմական էությունը՝ այդ ուսմունքի զարգացման սկզբնական էտապում։

Այս շրջանի ամենախոշոր դեմքն է ֆրանսիացի գիտնական Շարլ Լուի Մոնտեսքյոն, որի «Օրենքների ոգու մասին» գրքով դրվում են նոր ժամանակների աշխարհագրական դետերմինիզմի հիմքերը։

Մոնտեսքյոյի ուսմունքի էությունը հետևյալն է. երկրի կլիմայական պայմանները որոշում են մարդկանց բնավորությունը, բարքերն ու հակումները,

որոնցից կախված են տվյալ ժողովրդի հասարակական կառուցվածքը, նրա կյանքի բնույթը, օրենքները, քաղաքական կառուցվածքը և նույնիսկ ազատության զարգացման աստիճանը։ Այսպիսով, աշխարհագրական միջավայրի էլեմենտներից մեկը՝ կլիման, Մոնտեսքյոյի մոտ երևան է գալիս որպես հասարակության զարգացման վճռական գործոն։

Մոնտեսքյոյի տեսությունը կլիմայի ամենազոր ազդեցության մասին (իր գրքում նա մի տեղ ուղղակի գրում է. «Կլիմայի իշխանությունը ամեն մի իշխանությունից ուժեղ է»[1]), չնայած իր հարաբերական պրոգրեսիվությանը, հենց սկզբից իր մեջ կրում էր մի շարք ռեակցիոն հետևությունների հնարավորությունը։ Այդ ուսմունքը հետևողականորեն կիրառողը պետք է ընդուներ, որ տաք երկրների ժողովուրդները, կլիմայական առանձնահատկությունների հետևանքով, բնականորեն եղել են ու կմնան ճնշված ու ենթակա վիճակում, որովհետև տաք կլիմային իբր թե համապատասխանում է միմիայն մտավոր, կուլտուրական ու տնտեսական հետամնացությունը[2]։ Մոնտեսքյոյի ուսմունքից այսպիսի ռեակցիոն հետևություններ անելու հնարավորությունը մատնանշել էին դեռևս XVIII դարի ֆրանսիական մատերիալիստները (մասնավորապես Հելվեցիուսը)։ Սակայն ի պատիվ Մոնտեսքյոյի պետք է նշել, որ նա ոչ միայն այդ կարգի ռեակցիոն հետևություններ չէր անում իր ուսմունքից, այլ, ընդհակառակը, պնդում էր, որ եթե որևէ երկրում օրենքները չեն համապատասխանում կլիմային, հետևապես՝ նաև մարդկանց բարքերին ու բնավորությանը, ապա անհրաժեշտ է վոխել դրանք և համապատասխան դարձնել կլիմային ու մարդկանց բնավորությանը։ Դժվար չէ նկատել այս կարգի պնդումների պրոգրեսիվ, հակաֆեոդալական էությունը։

XIX դարի կեսերին աշխարհագրական դետերմինիզմի հիմնավորմամբ ու պաշտպանությամբ հանդես եկավ անգլիացի սոցիոլոգ Հենրի Թոմաս Բոքլը, որը ձգտում էր այդ «տեսության» հիման վրա արդարացնել դասակարգային անհավասարությունն ու իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականությունը։ Բոքլը գտնում էր, որ նյութական հարստությունների ինչպես արտադրությունը, այնպես էլ բաշխումը լիակատար կախման մեջ են աշխարհագրական պայմաններից, որոնց ազդեցության ուժը իբր անհաղթահարելի է և որոնցով որոշվում է նաև հասարակական ողջ զարգացման հիմքը հանդիսացող իդեական զարգացումը։ Բոքլի կարծիքով, «բարձր և ստորին դասակարգերի միջև եղած փոխհարաբերությունը հիմնականում կախված է բնության առանձնահատկություններից»[3], այսինքն՝ ըստ էության եղել է ու կմնա անփոփոխ, իսկ գաղութային ժողովուրդների ճնշված ու հետամնաց վիճակը հետևանք է յոկ բնության անհաղթահարելի օրենքների ներգործոն ազդեցության[4]։ Այսպիսով, Բոքլը իր ուսմունքով ըստ էության հանդես էր գալիս որպես բուրժուական հարաբերությունների և գաղութատիրության ջատագով։

---

[1] Шарль Монтескье, О духе законов, СПб., 1900, էջ 306։

[2] Տարբեր ժողովուրդների ու ցեղերի «անհավասարության» և «անհամարժեքության» պատճառները աշխարհագրական պայմանների մեջ փնտրող տեսակետները, ինչպես հետագայում կտեսնենք, յայն զարգացում ու տարածում ստացան Եվրոպայի կապիտալիստական երկրների գաղութային յայն էքսպանսիայի ժամանակաշրջանում տարածված աշխարհագրական դետերմինիզմի մեջ։

[3] Генри Томас Бокль, История цивилизации в Англии, СПб., 1895, էջ 27։

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 30—31։

XIX դարի ընթացքում աշխարհագրական դետերմինիզմը լայն տարածում ստացավ հատկապես Գերմանիայում։ Նրա ականավոր ներկայացուցիչներից էին Կարլ Ռիտտերը և Ֆրիդրիխ Ռատցելը։ Նրանցից առաջինը ձգտում էր ապացուցել աշխարհագրական միջավայրի և առաջին հերթին՝ տվյալ երկրի աշխարհագրական դիրքի որոշիչ նշանակությունը ժողովուրդների պատմական բախտի համար։ Ինչ վերաբերում է Ռատցելին, ապա նա իր մի շարք աշխատություններում «հիմնավորեց» ոչ միայն բուրժուական հակագիտական «ռասայական տեսությունը», այլև զարգացրեց աշխարհագրական դետերմինիզմի «տեսությունը», պնդելով, որ աշխարհագրական միջավայրի վճռական ազդեցությունից է կախված ամեն մի ժողովրդի ինչպես տնտեսական զարգացման աստիճանը, այնպես էլ քաղաքական կառուցվածքի բնույթն ու կուլտուրական մակարդակը։ Ռատցելը պնդում է, որ ժողովրդի ճակատագիրը պայմանավորում են հողն ու երկինքը, բուսական ու կենդանական աշխարհները։ Նա գտնում է, որ «տվյալ երկրի դիրքը որոշակի կիսագնդում, որոշակի աշխարհամասում, թերակղզում, արշիպելագում, ծովերի, լճերի, դետերի, անապատների մոտիկությունը,— այս ամենը որոշում են պատմության ընթացքը»[1]։

Իր նախորդներից մի խոշոր քայլ առաջ գնալով աշխարհագրական դետերմինիզմից արվող ռեակցիոն հետևություններին մեջ, Ռատցելը, որպես պատմական ասպարեզ իջած գերմանական իմպերիալիզմի կարկառուն դաղափարախոսը, գրում էր. «Եթե մի որևէ ժողովուրդ իր պատմական զարգացման ընթացքում չի ունեցել ընդարձակ հողային տարածություններ, ապա նրա գերագույն կոչումը առաջին հերթին արտահայտվում է այն բանում, որ նա լավացնում է իր աշխարհագրական դիրքը. նա վերացնում է ներքին արգելքները, լավացնում է արտաքին սահմանները, ընդարձակում է իր հողային տարածությունը՝ հարևան հողերը նվաճելու միջոցով, ձեռք է բերում հեռավոր գաղութներ»[2]։ Ռատցելի կարծիքով, «ձգտումը դեպի ընդարձակ ծավալումը, որը երկրի սահմանները լայնացնում է մինչև հնարավոր սահմանները», հանդիսանում է «բարձրագույն կուլտուրայի հատկանիշը»[3]։

Աշխարհագրական դետերմինիզմից բխող այս էքսպանսիոնիստական նպատակասլացությունը լիովին համապատասխանում էր գերմանական ռազմատենչ բուրժուազիայի իմպերիալիստական ձգտումներին։ Ահա թե ինչու Ռատցելը հանդիսացավ գերմանական ֆաշիստների իդեոլոգիական զենքերից մեկի՝ այսպես կոչված գեոպոլիտիկայի նախակարապետներից մեկը։

Աշխարհագրական դետերմինիզմը իր կողմնակիցներն ուներ նաև ռուսական բուրժուական պատմաբանների ու սոցիոլոգների մեջ։ Այսպես, հայտնի ռուս գիտնական Կարլ Էռնստ Բերը գտնում էր, որ «ժողովուրդների ճակատագիրը, կարծես թե անխուսափելիորեն, կանխորոշվում է նրանց զբաղեցրած վայրի բնույթով»[4] և որ «համաշխարհային պատմության ընթացքը, իհարկե, ավելի շատ որոշվում է արտաքին ֆիզիկական պայմաններով»[5]։

---

[1] Ֆ. Ռատցել, Человечество как жизненное явление на земле, 1901, էջ 102։

[2] Ֆ. Ռատցել, Земля и жизнь, т. 2, էջ 702։

[3] Ֆ. Ռատցել, Человечество как жизненное явление на земле, էջ 86։

[4] Տե՛ս „Карманная книжка для любителей землеведения, изданная от Российского географического общества", СПб., 1848, էջ 210։

[5] Նույն տեղում, էջ 230—231։

Հայտնի ռուս պատմաբան Ս. Մ. Սոլովյովի կարծիքով «ժողովրդի կյանքի վրա հատուկ ազդեցություն են գործում երեք պայմաններ. այն երկրի բնությունը, ուր նա ապրում է, այն ցեղի բնույթը, որին նա պատկանում է, արտաքին անցքերի ընթացքը, այն ազդեցությունները, որ դալիս են նրան շրջապատող ժողովուրդներից»[1]։ Ընդգծելով աշխարհագրական միջավայրի վճռական նշանակությունը, մի այլ տեղ նա գրում էր. «Դեպքերի ընթացքը մշտապես ենթակա է բնության պայմաններին»[2]։ Մի այլ ռուս պատմաբան, Ա. Պ. Շչապովը գրում էր, որ «մարդիկ բնական ձևերի կենդանի մարմնավորումներն են»[3], իսկ Վ. Օ. Կլյուչևսկին պնդում էր, որ հին Ռուսաստանի պատմությունը հիմնականում ընթացել է «ըստ դետերի գծած ծրագրի»[4]։

Հետագայում մենք կտեսնենք, որ աշխարհագրական դետերմինիզմի հայ կողմնակիցների շատ մտքերը կրկնում են ռուս այս գիտնականների կարծիքները։

XIX դարում աշխարհագրական դետերմինիզմի խոշորագույն ներկայացուցիչներից էր ռուս գիտնական Լև Իլյիչ Մեչնիկովը։ Իր «Քաղաքակրթությունը և պատմական մեծ գետերը» հիմնական աշխատության մեջ նա ձգտում է ապացուցել, որ աշխարհագրական միջավայրը հանդիսանում է պատմական առաջադիմության այն վճռական գործոնը, որով պայմանավորված է հասարակական կառուցվածքի բնույթը։ Հասարակության զարգացման գործում Մեչնիկովը հիմնական դերը վերագրում է գետերին։ «Մեր տեսակետից,— գրում է նա,— քաղաքակրթության առաջացման ու զարգացման հիմնական պատճառ հանդիսանում են գետերը։ Գետը, ամեն մի երկրում, հանդիսանում է ֆիզիկա-աշխարհագրական պայմանների — և՛ կլիմայի, և՛ հողի, և՛ մակերևույթի կազմության, և՛ տվյալ մարդի երկրաբանական կառուցվածքի — ամբողջության կենդանի սինթեզի մի տեսակ արտահայտությունը»[5]։

Հարկ է նշել, որ մեր հիշատակած ռուս գիտնականներից ոչ մեկը իր ուսմունքից որևէ ռասիստական կամ էքսպանսիոնիստական եզրակացություն չէր անում[6]։ Ընդհակառակը, աշխարհագրական դետերմինիզմի ամենացայտուն ռուս ներկայացուցիչը՝ Մեչնիկովը բացարձակորեն ու շատ խիստ է արտահայտվում արևմտաեվրոպական որոշ գիտնականների հակագիտական ռասայական «տեսությունների» դեմ, որոնք առանձին ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական հետամնացությունը բացատրում էին նրանց անփոփոխ ռասայական հատկանիշներով, որոնք իբր թե աշխարհագրական միջավայրի ազդեցության անխուսափելի հետևանք են։

* * *

Աշխարհագրական դետերմինիզմով ժամանակին հրապուրվել են նաև հայ պատմաբաններից ոմանք։ Եվ դա պատահական երևույթ չէ, եթե հիշենք, որ

---

[1] С. Соловьев, Начало Русской земли, էջ 761։

[2] С. Соловьев, История России, книга 1, էջ 13։

[3] А. П. Щапов, Сочинения, т. II, 1906, էջ 158։

[4] В. О. Ключевский, Курс русской истории, ч. I, Петроград, 1918, էջ 70։

[5] Лев Мечников, Цивилизация и великие исторические реки, М., 1924, էջ 159

[6] Նույնը վերաբերում է նաև աշխարհագրական դետերմինիզմի հայ ներկայացուցիչներին, որոնցից առավել աչքի ընկնողների տեսակետների վերլուծմանը մենք անդրադառնալու ենք ստորև։

նախքան մարքսիստական պատմագրության երևան գալը հայ, ինչպես և ռուսական ու արևմտաեվրոպական պատմագրության մեջ անբաժանելիորեն իշխում էին վուլգար մատերիալիստական կամ իդեալիստական սոցիոլոգիական ուսմունքները, իսկ վերջինների թվում՝ նաև աշխարհագրական դետերմինիզմը։

Հայ պատմաբաններից առաջինը Ա. Մ. Գարագաշյանն էր, որի մոտ մենք տեսնում ենք աշխարհագրական դետերմինիզմի որոշակի արտահայտությունը։ Իր «Քննական պատմություն հայոց» գրքում նա մեր պատմագրության մեջ առաջին անգամ փորձ արեց մեկ միասնական պատմագիտական սկզբունքով քննարկման ենթարկել հայ ժողովրդի անցյալ պատմությունը, ձգտելով բացահայտել նրա պատմական զարգացման շարժիչ ուժերը, որոնելով դրանք ո՛չ թե լոկ առաջնորդների ու թագավորների արարքների մեջ (ինչպես այդ անում էր հայ ավանդական, կզերա-ֆեոդալական պատմագրությունը, որի կարկառուն ներկայացուցիչը Չամչյանն էր), այլ փնտրելով վերջիններիս դրդապատճառները երկրի ներքին ու արտաքին պայմաններում։ Անշուշտ, սա շատ արժեքավոր առաջընթաց քայլ էր հայ նախորդ պատմագրության համեմատությամբ։ Սակայն կանգնած լինելով իդեալիստական դիրքերում, Գարագաշյանը հավասարապես կարևոր էր համարում և՛ երկրի աշխարհագրական դիրքը, և՛ մեր ժողովրդի սակավաթիվ լինելը, և՛ հայերի ու հարևան ժողովուրդների բնավորության դծերը, և՛ դրացի երկրների հակամարտությունները,— բոլորովին անտեսելով հասարակական զարգացման միակ վճռական գործոնը՝ նյութական բարիքների արտադրության եղանակն ու նրա նշանակությունը ժողովրդի պատմական զարգացման համար։

Շարադրելով իր տեսակետը այն մասին, թե ինչ սկզբունքներից պետք է ելնել ժողովրդի պատմությունը ուսումնասիրելիս, Գարագաշյանը գրում է. «Որովհետև ազգ կամ ժողովուրդ մը, թէև ինքնիշխան, ցորչափ կենդանի և գործող է՝ չկարէ լինել այն աստիճան զատուցեալ և առանձին, մինչև բոլորովին դուրս մնալ որևիցէ արտաքին ազդեցութենէ, այլ միշտ ուրիշ գոնէ զօրաւոր ազգերէ, ինչպես նաև իւր աշխարհագրական որպիսութենէն աւելի կամ նուազ ազդում ընդունելու յարմար է՝ հարկ է պատմութիւնը, թէև մասնաւոր և ազգային՝ յառաջ տանել նկատելով ժամանակին ընդհանուր և մանաւանդ տիրող պատմութիւնը. չէ պարտ մոռանալ նաև երկրին և դրացի երկիրներուն աշխարհագրական փոփոխումն, որ զհետ գայ ներքին և արտաքին քաղաքական փոփոխմանց»[1]։

Ելնելով վերոհիշյալ դիրքերից, նա հետևյալ կերպ է բացատրում հայկական պետականության անկումը Հռոմի և Սասանյան Իրանի գերիշխանության շրջանում։ «Հայք, թէև ուրոյն թագաւորութիւն՝ չեղան կարող, երկրին դրից և ուրիշ ներքին և արտաքին պարագաներու պատճառաւ, ունենալ անկախ գոյութիւն։ Հայաստան...ի վախճանի անկաւ իսպառ ընդ իշխանութեամբ երկու հին ոսոխ տէրութեանց։ ...Պատճառք անկման Հայոց են պէսպէս, ներքին և արտաքին։ Ներքին պատճառք են, որպէս ասացաւ՝ դիրք երկրին, որ առնէր զնա ասպարէզ անդուլ պատերազմաց ի մէջ երկու հակառակորդ տէրութեանց (Բիդդէր), սակաւութիւնն... և աւատային (fe dal) դրութիւնն։ Իսկ արտաքին պատճառք

[1] Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմութիւն հայոց, Ա մասն, Առաջարան հեղինակի, Թիֆլիս, 1895, էջ Ի։

են՝ երկու դրացի մեծ տէրութեանց միոյն մոլեռանդութիւնն և միւսոյն յոռի քաղաքականութիւնն»[1]։

Այս քաղվածքի մեջ ամենից հետաքրքրականը այն է, որ իր ասածի ճշմարտացիությունը հավաստելու համար Գարագաշյանը վկայակոչում է իր ժամանակվա աշխարհագրական դետերմինիզմի ամենահայտնի ու ճանաչված ներկայացուցիչներից մեկին՝ գերմանացի գիտնական Կարլ Ռիտտերին, որը, ինչպես վերևում ասել ենք, ձգտում էր ապացուցել աշխարհագրական միջավայրի, և առաջին հերթին, ամեն մի երկրի աշխարհագրական դիրքի, վճռական նշանակությունը նրանում բնակվող ժողովրդի պատմական բախտի համար։ Որ Գարագաշյանը ծանոթ էր XIX դարի երկրորդ կեսում խիստ տարածված աշխարհագրական դետերմինիզմին, ինչպես և 1817—1859 թթ. ընթացքում լույս տեսած Ռիտտերի աշխատություններին ու բաժանում էր նրանց հեղինակի վերոհիշյալ տեսակետը, աներկբայորեն վկայում է վերևում բերված քաղվածքը և հատկապես Ռիտտերի վկայակոչումը Գարագաշյանի կողմից։ Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ երկու հեղինակների տեսակետների միջև միակ հիմնական տարբերությունն այն է, որ Գարագաշյանի մոտ աշխարհագրական ֆակտորի որոշիչ նշանակությունը այնպես վճռականորեն չի շեշտված, ինչպես Ռիտտերի մոտ։

Հաջորդ խոշոր հայ պատմաբանը, որի մոտ ցայտուն կերպով արտահայտված է աշխարհագրական դետերմինիզմը, Ստ. Պալասանյանն է։ Թեպետ և նա զուրկ է պատմության շարադրման քննական մեթոդից, այնուամենայնիվ աշխատում է գտնել հայ ժողովրդի պատմական զարգացման հիմնական շարժառիթները, որոնք նրա մոտ վերջին հաշվով հանգում են աշխարհագրական ֆակտորներին։

Հայ ժողովրդի հին ու միջնադարյան ողջ պատմությունը իր բոլոր նախորդների նման ֆեոդալիզմի պատմություն համարելով և ձգտելով բացատրել ֆեոդալական կարգերի առաջացման պատճառները Հայաստանում, Պալասանյանը գրում է. «...Կառավարության մեկ կամ մյուս ձևը կախված է երկրի դիրքից, ժողովրդական կյանքի պայմաններից և շրջակա ազգերի բնավորությունից։ Պատմությունից տեսնում ենք ,որ քարքրոտ (sic!) ու ավազոտ տեղերում և ծովային ափերի մոտ բնակող ժողովրդները, իրենց չոր ու ցամաք երկրի պատճառով, շուտով ստիպվում են դաշտային երկրները ասպատակել կողոպուտ անելու դիտավորությամբ։ Այսպիսի ժողովրդների մեջ բնականապես գերագույն իշխանությունը հենց սկզբից այն գերդաստանի ձեռքն է անցնում, որից դուրս են գալիս քաջասիրտ և հաջողակ առաջնորդներ. կազմվում է մի ժառանգական հարստություն և միապետական իշխանությունը անզգալի կերպով հաստատություն է առնում։ Ուրիշ բան է պատահում հովվական ու երկրագործական խաղաղ ժողովրդների մեջ։ Այստեղ առանձին գերդաստաններ միանում և ցեղական ընկերություններ են կազմում առանձին ցեղապետների պաշտպանության տակ, որոնց պարտքն է հովվել իրենց ցեղը և պաշտպանել նորա սեփականությունն ու աշխատանքի պտուղը անիրավության դեմ։ Այստեղ արյունակից գերդաստաններ կամաց կամաց ցեղական ընկերություններ կազմելով՝ գերդաստանի հոր իրավունքներն էլ անցնում են ցեղապետին, և

[1] Ա. Մ. Գ ա ր ա գ ա շ յ ա ն. Քննական պատմութիւն Հայոց. Բ մասն, գլ. ԺԲ, էջ 267։ «Աւատային դրութիւն» ասելով Գարագաշյանը նկատի ունի երկրի ֆեոդալական մասնատվածությունը։

այսպիսով կազմվում է կալվածական կամ տանուտիրական կառավարությունը, որ Հայոց էլ՝ իբրև հովվական ու երկրագործական ժողովրդի, սեփական էր սկզբնական ժամանակներումը»[1]։

Մի այլ տեղ, խոսելով հայկական նախարարությունների առաջացման պատճառների մասին, Պալասանյանը գրում է. «Նախարարությունը այնքան հին է որքան և Հայոց ազգությունը...։ Բխելով այն ցեղական իշխանություններից՝ որ Հայաստանի աշխարհագրական դիրքի շնորհիվ անհիշատակ ժամանակներից կազմվել էին երկրի զանազան կողմերում, նախարարությունները հետզհետե զարգացան ու զորացան, և Հայոց հին թագավորների բոլոր ջանքերը զուր եղան նվաճելու և կենտրոնական իշխանությանը հպատակեցնելու նոցա»[2]։

Եթե փորձենք վերլուծել ֆեոդալիզմի առաջացման խիստ բարդ ու կարևոր պրոբլեմի այս մեկնարանությունը, որ տալիս է Պալասանյանը, կստացվի հետևյալ պարզունակ սխեման. որը, ինչպես արդեն տեսել ենք, շատ բնորոշ է աշխարհագրական դետերմինիզմի կողմնակիցների համար.

1) քարքարոտ (հետևապես՝ նաև լեռնային) ու ավազոտ վայրերում ապրող ժողովուրդները «իրենց չոր ու ցամաք երկրի պատճառով» ստիպված են ասպատակել ու կողոպտել դաշտային երկրները.

2) դրա հետևանքով (այսինքն՝ վերջին հաշվով երկրի քարքարոտ, չոր ու ցամաք, ավազոտ կամ լեռնային լինելու հետևանքով) այդ ժողովուրդների մեջ գերագույն իշխանությունը հենց սկզբից «բնականապես» անցնում է «քաջասիրտ և հաջողակ» առաջնորդ ունեցող գերդաստանի ձեռքը։

3) այսպես «անզգալի կերպով», որպես երկրի բնական պայմանների հետևանք, առաջանում են «ժառանգական հարստություններ» (դինաստիան) և միապետական իշխանությունը.

4) հովվական ու երկրագործական ժողովուրդների մոտ, որոնք ապրում են անհամեմատ բերրի երկրներում, մարդկանց աշխատանքի պտուղն ու սեփականությունը «անիրավության դեմ» (այսինքն՝ «չոր ու ցամաք» երկրներից եկող կողոպտիչներից) պաշտպանելու համար, առանձին գերդաստանները միանալով կազմում են «ցեղական ընկերություններ».

5) միացող գերդաստանների հայրերի իրավունքները կամաց-կամաց անցնում են ստեղծված «ցեղական ընկերության» ցեղապետին.

6) այսպիսով, վերջին հաշվով դարձյալ երկրի աշխարհագրական պայմանների հետևանքով, առաջանում է «կալվածական կամ տանուտիրական կառավարությունը», այսինքն՝ ֆեոդալական հասարակարգը, որը իբր թե ամենասկզբնական ժամանակներից հատուկ էր նաև հայերին՝ որպես հովվական ու երկրագործական ժողովրդի։

Մեր մեջ բերած քաղվածքները ցույց են տալիս նաև, որ երբ Պալասանյանն ասում է, թե երկրի կառավարության այս կամ այն ձևը բացի աշխարհագրական դիրքից («աշխարհագրական դիրք» ասելով Պալասանյանը հասկանում է երկրի մակերևույթի կազմությունն ու աշխարհագրական տեղադրությունը) կախված է նաև «ժողովրդական կյանքի պայմաններից և շրջակա

---

[1] Ա ռ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն, Պատմություն հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս. 1890, էջ 55—56 (ընդգծումները մերն են—Ա. Ռ.)։

[2] Նույն տեղում, էջ 129 (ընդգծումը մերն է—Ա. Ռ.)։

ազգերի բնավորությունից», ապա նա դրանց տակ հասկանում է ոչ այլ բան, քան եթե ժողովրդի զբաղմունքները՝ կողոպուտ անելը, հողագործ կամ խաշնարած լինելը և այլն, որոնք, ըստ Պալասանյանի, դարձյալ հետեանք են աշխարհագրական որոշակի պայմանների։

Իսկ որո՞նք էին, ըստ Պալասանյանի, միջնադարյան Հայաստանի ֆեոդալական մասնատվածության, կենտրոնացած պետական կազմավորումների անկայունության և կարճատև գոյության պատճառները։ Ահա թե ինչպես է բացատրում նա այդ բարդ ու կարևոր երևույթները իր գրքի «Նախադիտելիք» բաժնում, որը ընդհանուր ներածականի բնույթ ունի և ըստ էության հանդիսանում է Պալասանյանի ընդհանուր-պատմական կոնցեպցիայի համառոտ շարադրանքը։

«Եթե ուշի ուշով հետապոտենք Հայոց երկրի ձևակերպությունը,— գրում է նա,— կտեսնենք, որ զորավոր ազդեցություն է ունեցել ազգի պատմական բախտի վրա։ Ամբողջ երկիրը կտրտված է մեծ ու փոքր լեռներով՝ որոնց հետևում են ձորեր ու հովիտներ, և բազմաթիվ գետերի ու վտակների հոսանքներով, որոնք իրրև մի մի բնական պատվար՝ բնակիչները միմյանցից անջատում և հաղորդակցությունը դժվարացնում էին։ Այս հանգամանքը նպաստեց ցեղական կյանքի զարգացմանը Հայոց մեջ, և հենց սկզբից երկրի զանազան կողմերում կազմվեցան բազմաթիվ մեծ ու փոքր իշխանություններ, որոնք առ հասարակ ձգտում էին թագավորությունից անկախ լինել։ Արարատյան թագավորները որքան և աշխատեցան, չկարողացան կատարելապես նվաճել այդ իշխանությունները։ Ստիպված լինելով մեկ կողմից ներքին թշնամիների դեմ մաքառելու և մյուս կողմից Հայաստանի շուրջը հետզհետե կազմվող գինվորական պետությունների դեմ, որպիսիք էին ասորա-բաբելական և մարա-պարսկական տերությունները,— Հայոց թագավորները չհաջողեցան մի կենտրոնական հզոր ֆեոդալական պետություն կազմել, որ յուր իշխանությունը տարածեր բովանդակ երկրի վրա։ Ընդհակառակն, ներքին երկպառակությունները, որ Հայոց տերության թերի կազմակերպության հետևանք էին, ընդհատեցին պետության զարգացումը և նա թույլ ու անպաշտպան մնաց արտաքին թշնամիների առաջ։ Այսպիսով Հայաստանը որս դարձավ նախ Հռոմայեցոց ու Պարթևաց և ապա Բյուզանդիայի կայսրների և Սասանյան թագավորների ձեռքը, հետո դատապարտվեցավ կրել Արաբացոց լուծը և ոտնակոխ լինել Թուրքերից ու Մոնղոլներից, մինչև որ վերջապես բաժանվեցավ Օսմանցոց ու Պարսից և վերջերը նաև Ռուսաց մեջ»[1]։

Այս մեջբերումից պարզ երևում է Պալասանյանի եզրահանգումների հետևյալ շարքը։ Լեռներով, ձորերով, հովիտներով ու գետերի հոսանքներով կտրտված մակերևույթի կազմության շնորհիվ, Հայաստանում զարգացել է «ցեղական կյանքը», որը հիմք է հանդիսացել անջատողական, կենտրոնախույս հովերով տարված բազմաթիվ «իշխանությունների» (իմա՝ նախարարությունների — Ա. Ռ.) առաջացման։ Պետության այս «թերի կազմակերպության» հետևանքով (որը, ինչպես տեսանք, վերջին հաշվով դարձյալ աշխարհագրական պայմանների հետևանք էր) Հայաստանը նվաճվել է հարևան զորեղ պետությունների կողմից...։

---

[1] Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց սկզբից մինչև մեր օրերը, էջ 11—12 (ընդգծումները մերն են—Ա. Ռ.)։

Ի մի բերելով ու ամփոփելով Պալասանյանի վերևում հիշատակված բոլոր մտքերը, անխուսափելիորեն կհանգենք այն եզրակացությանը, որ նրա կարծիքով ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի պատմական զարգացման բոլոր կարևորագույն անցքերը՝ աշխատանքի առաջին մեծ բաժանումը («ասպատակող» որսորդների, հողագործների ու խաշնարածների առանձնացումը), ժառանգական միապետական իշխանության և «ցեղական ընկերությունների» հիման վրա գոյացող նախարարությունների առաջացումը, երկրի ֆեոդալական մանրատվածությունը, ֆեոդալների անջատողական ձգտումները, կենտրոնացած իշխանության թուլությունն ու կարճատև կյանքը,— այս ամենը հետևանք են գլխավորապես և համարյա բացառապես երկրի աշխարհագրական դիրքի ու պայմանների։

Աշխարհագրական դետերմինիզմը հայ պատմաբաններից ամենից ավելի որոշակիորեն արտահայտված է Լեոյի մոտ։

Իր «Հայոց պատմության» I հատորում մանրամասնորեն նկարագրելով «Հայկական լեռնակղզու» ֆիզիկա-աշխարհագրական պայմանները, Լեոն հանդում է հետևյալ բնորոշ եզրակացությանը, որը, ըստ էության, նրա պատմա-փիլիսոփայական կոնցեպցիայի մի կարևոր բաղադրիչ մասն է.

«Համեմատական աշխարհագրությունը ուսումնասիրում է այն ազդեցությունները, որոնց տակ մի երկիր, մի ազգաբնակություն կազմակերպվում է իբրև հասարակական-պատմական երևույթ։ Այդ բնական ազդեցությունները երեք տեսակ են. աստղաբաշխական (կլիմա և այլն), ֆիզիկական (երկրի կազմակերպություն[1] և այլն) և բուսական ու կենդանական աշխարհի ազդեցություն։ Մենք, որ մանրամասն ծանոթացանք այս բոլոր ազդեցությունների հետ, այժմ կարող ենք եզրակացություններ հանել, թե ինչ տեսակ քաղաքական և կուլտուրական կյանք կարող էր զարգանալ Հայաստանի լեռնակղզում։ Մեզ արդեն ծանոր պայմաններով օժտված մի երկիր նախ և առաջ պիտի ներկայացնե տեղական, առանձնակի շահերի հարստություն և ընդհանուր, համայնական շահերի աղքատություն։ Երկիրը կուլտուրական շերտավորումների բազմազանություն է արտադրում։ Խոր հովիտների ու կիրճերի մեջ բնությունը հարուստ է, թույլ է տալիս բարձր աստիճանի կուլտուրա։ Այդտեղ ազգաբնակությունը նստակյաց է, ունի համախմբվելու, ուժեղ կազմակերպություն ստեղծելու հրամայողական կարիք։ Բայց այդպիսի տեղեր շատ չեն, ոչ էլ միապաղաղ երկար տարածություններ են կազմում, այլ կղզիացած, ցրված են, միմյանցից հեռու, անջատված լեռներով։ Տիրապետողը, ընդարձակը, երկրին ընդհանուր դույն տվողը լեռնային արոտների իրականությունն է, ուր կարող է զարգանալ հովվական թափառիկ, աստանդական կենցաղը։ Իսկ հովվական կացությունը բոլորովին հակասում է հովիտների նստակեցության իդեալներին։ Նա ճանաչում և պաշտում է միայն անձնական ազատություն, անջատ անհատական շահեր, նա արհամարհում է քաղաքական և վարչական սահմանները, որովհետև նրա հոտերին հարկավոր են ընդարձակ տարածություններ և նա իր շահերով կապված չէ մի որևէ հայտնի տեղի, հայտնի շրջանակի հետ։ Այս է պատճառը, որ Հայաստանը չկարողացավ տեղական անջատ շահերի իրականությունից բարձրանալ մինչև ընդհանուր-համայնական, ընդհանուր-պետական շահերի մշտատև հասկացողությունը։ Այսպիսի մի երկիր չի

[1] Այս բառի տակ Լեոն հասկանում է մակերևույթի կազմությունը — Ա. Ո.։

կարող ուժեղ, կենտրոնացած պետություն, կամ ավելի նիշտ ասած՝ բոնապետություն ստեղծել»[1]:

Միջանկյալ նշենք, որ, ընդհատելով իր խորհրդածությունները, Լեոն այստեղ ծանոթագրության մեջ վկայակոչում է Լ. Մեչնիկովի «Քաղաքակրթությունը և պատմական մեծ դետերը» աշխատությունը,— մի գիրք, որի հեղինակը, որպես հետևողական աշխարհագրական դետերմինիստ, ի միջի այլոց, պնդում էր, թե «Մեծ Բրիտանիայի պետական կառուցվածքը շատ տեսակետներից կարելի է համարել նրա կղզային գրության պարզ հետևանքը»[2]: Սա մի չափազանց բնորոշ զուգադիպություն է. եթե Գարագաշյանը, վկայակոչելով Ռիտտերին, ըստ էության ցույց էր տալիս իր և Ռիտտերի տեսակետների նույնականությունը, ապա Լեոն, վկայակոչելով Մեչնիկովին, պարզորոշ վկայում է, որ ինքը աշխարհագրական դետերմինիզմի համոզված կողմնակիցն է:

Այնուհետև Լեոն շարունակում է. «Անհամաչափությունը երկրի զանազան մասերի ազգաբնակության հոգեկան կարողությունների մեջ չափազանց մեծ էր, որպեսզի կարելի լիներ սպասել ընդհանուր, համայնական գործակցություն մի համազգային հարցի շուրջը: ...Եվ շատ հասկանալի է, որ աշխարհագրական պայմաններով նպաստավորվող այսպիսի այլազանությունը, կուլտուրական աստիճանների հակադրությունները ստեղծեցին ամբողջ երկրի համար բաղամականապես բույլ կազմակերպված մի պետություն, որ ենթարկվում էր ուրիշների տիրապետության և մանավանդ կուլտուրական ազդեցության»[3]:

Լեոյի այս դատողություններից միանգամայն պարզ է դառնում նրա աշխարհագրական-դետերմինիստական կոնցեպցիան, որի էությունը հետևյալն է.

1) «Հայկական լեռնակղզու», այսինքն՝ ամբողջ պատմական Հայաստանի, ֆիզիկա-աշխարհագրական պայմանները այնպիսին են, որ «երկրին ընդհանուր դույն տվողը լեռնային արոտների իրականությունն է», ուր կարող է զարգանալ միմիայն «հովվական թափառիկ կենցաղը», որը հակառակ է փոքրաթիվ գետահովիտներում բնականորեն առաջացող նստակյաց բնակչության «համախմբվելու, ուժեղ կազմակերպություն ստեղծելու հրամայողական կարիքին»:

2) Այս հանգամանքի, այսինքն՝ աշխարհագրական պայմանների շնորհիվ, Հայաստանը «նախ և առաջ պիտի ներկայացնե տեղական, առանձնակի շահերի հարստություն և ընդհանուր, համայնական շահերի աղքատություն», ինչ որ Լեոյի կարծիքով բնորոշ է եղել մեր երկրի ողջ հին պատմությանը:

3) Այդ նույն աշխարհագրական պայմաններն էին այն միակ հիմնական պատճառը, որի հետևանքով «Հայաստանը չկարողացավ տեղական անջատ շահերի իրականությունից բարձրանալ մինչև ընդհանուր-համայնական, ընդհանուր-պետական շահերի մշտատև հասկացողությունը»: Ահա թե որն է, քստ Լեոյի, միջնադարյան Հայաստանի ֆեոդալական մասնատվածության պատճառը...:

4) Հայաստանի աշխարհագրական առանձնահատկությունների հետևանքով անհամաչափությունը երկրի զանազան մասերի ազգաբնակության հոգեկան

[1] *Լեո, Հայոց պատմություն, հատ. I, Թիֆլիս, 1917, էջ 166—167 (ընդգծումները մերն են - Ա. Ռ.):*

[2] Л. Мечников. Цивилизация и великие исторические реки, *էջ 86:*

[3] *Լեո, Հայոց պատմություն, հատ. I, էջ 167 (ընդգծումները մերն են — Ա. Ռ.):*

կարողությունների մեջ չափազանց մեծ էր, որպեսզի կարելի լիներ սպասել ընդհանուր համայնական գործակցություն մի համազգային հարցի շուրջը»։ Ըստ Լեոյի, սա միջնադարյան Հայաստանի ֆեոդալական մասնատվածության, այսպես ասած, հոգեբանական հիմքն էր, որի ենթահողը դարձյալ աշխարհագրական պայմաններն են համարվում։

5) Աշխարհագրական առանձնահատկություններից բխող այս բոլոր պայմանների շնորհիվ ստեղծվել էր «քաղաքականապես թույլ կազմակերպված մի պետություն, որ ենթարկվում էր ուրիշների (իմա՝ օտարերկրյա ագրեսորների—Ա. Ո.) տիրապետության և մանավանդ կուլտուրական ազդեցության»։

6) Ավելին. «այսպիսի մի երկիր չի կարող ուժեղ, կենտրոնացած պետություն ստեղծել», այսինքն, ըստ Լեոյի, դատապարտված է հավերժ մասնատվածության վիճակի։ Սա այլ բան չէ, քան եթե աշխարհազրական ֆատալիզմ, որը հատուկ է եղել աշխարհագրական դետերմինիզմի կողմնակիցներից շատերին։

Ահա թե ինչքան հեշտ էր «լուծում» Լեոն Հայաստանի ոչ միայն անցյալ պատմության խրթին հարցերը, այլև նրա ապագայի։

Աշխարհագրական դետերմինիզմով տոգորված այս կարգի մտքերի մենք հանդիպում ենք նաև Լեոյի ավելի ուշ շրջանի գործերում։ Այսպես, «Խոջայական կապիտալում» հանգամանորեն նկարագրելով Ղարաբաղի բնական, տնտեսական ու քաղաքական պայմանները, նա իր մտքերը ամփոփում է հետևյալ կերպ.

«Յուրաքանչյուր լեռնաստան, լինելով մի մեկուսացած աշխարհ, բնականորեն ենթադրել է տալիս մի համառ ու խոժոռ պահպանողականություն։ ...Հայաստանի մեջ տեղի ունեցած խոր, սասանեցուցիչ քաղաքական տակնուվրայություններն իրենց հուժկու ալիքներով զարնվել էին Ղարաբաղի լեռներին և չկարողանալով սրբել տանել լեռնային ամրակուռ կենցաղը, ինչպես արել էին համարյա ամեն տեղ, ստեղծել են այնպիսի նոր դրություն, որ լեռնցիությունն, իր սեփական ինքնապահպանման համար, դիմում էր ձևափոխությունների և կարկատանների միջոցով դարձյալ պիտանի պահում հինը, նիմնականը»[1]։ Իսկ այդ «հիմնականը» և «հինը» «համառ ու խոժոռ պահպանողականությունն է», որը, ըստ Լեոյի, աշխարհագրական միջավայրի բնական հետևանք էր։

Նույն գրքի մի այլ մասում, խոսելով Իսրայել Օրու շրջանի մասին, Լեոն գրում է. «...լավագույն դեպքում լեռան (իմա՝ լեռնոտ երկրի — Ա. Ո.) պետական իդեալը գյուղական բազավորությունն էր, և այսպես էր և ուրիշ կերպ չէր կարող լինել, քանի որ լեռնային բնությունն իր աղքատության[2] պատճառով, մաքուր գավառական անջատականության մեջ էր ամփոփում իր տնտեսական շահերը։ Այս ընդհանուր տնտեսական տկարությունը, միշտ սեղմված պահելով ազգարնակությունն աղքատության նեղլիկ շրջանակների մեջ, հնարավոր չի դարձնում նրա համար ոչ միայն լայն ու ընդարձակ ճեռանկարներ, այլ նույնիսկ և մտածողական լայնախոհությունը՝ պետական և հասարակական կազմակերպության վերաբերմամբ»[3]։

---

[1] Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 134 (ընդգծումները մերն են—Ա. Ո.)։ Գրքում տպագրված է «իր աշխատության»։ Սա, անշուշտ, վրիպակ է—Ա. Ո.։

[3] Լեո, Նույն տեղում, էջ 194 (ընդգծումները մերն են—Ա. Ո.)։ Ըստ երևույթին «Խոջայական կապիտալի» մեջ տեղ գտած նաև այս կարգի սխալներն են նկատի ունեցել Հայպետհրատի հրատարակիչները, երբ գրքի փոքրիկ առաջաբան-անոտացիայի հենց առա-

Ճիշտ նույնատիպ դատողությունների մենք հանդիպում ենք նաև «Հայոց պատմության» II հատորում, որտեղ, օրինակ, կարդում ենք. «Այս բոլոր լեռնոտ տարածությունները Կուր-Արաքսյան տափաստաններից մինչև Բարձր Հայքի արևմտյան սահմանները միանման են իրենց բնույթամբ, որ ամեն տեղ գերազանցորեն միատեսակ անտեսական երևույթ է, հաստատել։ Ամեն տեղ հնարավոր է միայն ալպիական մշակույթը, որ ստեղծում է միատեսակ տնտեսական ձևեր, ժողովրդական հոգեբանության միատեսակ տեղային պայմաններ»[1]։ Քիչ հետո Լեոն գրում է. «Լեռնաստանի առանձնահատուկ պայմաններից մշակվում է շատ խիստ ընդգծված առանձնահատուկ տեղայնություն»[2]։

Հայ իրականության մեջ աշխարհագրական դետերմինիզմի ցայտուն ներկայացուցիչներից է նաև Խ. Սամվելյանը։

Իր «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության I հատորի երկրորդ գլխում հանգամանալից ուսումնասիրության ենթարկելով Հայաստանի բնական պայմանները, նա հանդում է հետևյալ ընդհանրացնող եզրակացությանը. «Ամեն մի ժողովրդի կուլտուրայի զարգացումը պատկերացնելիս անհրաժեշտ է ի նկատի առնել այն բնական միջավայրը, որտեղ ընթացել է այդ ժողովրդի բովանդակ կյանքը։ Բնական միջավայրն է պայմանավորում տվյալ ժողովրդի արտադրողական ուժերի բնույթն և զարգացումը, նրա տնտեսական գործունեության ամբողջ էությունը»[3]։ Դժվար չէ հասկանալ, որ այս պարբերության առաջին կեսը բացարձակ ճշմարտություն է, մինչդեռ երկրորդ, մեր ընդգծած մասը, չնայած իր «մարքսիստական» թվացող տերմինալոգիային («արտադրողական ուժերի բնույթն և զարգացումը», «տնտեսական գործունեության էությունը»), աշխարհագրական դետերմինիզմի ցցուն մի արտահայտությունն է։

Այդ նույն աշխատության մեջ ուսումնասիրելով այն հարցը, թե աշխարհագրական միջավայրի բաղկացուցիչ մասերից ո՞րն է նրա առավել վճռական էլեմենտը, Սամվելյանը գրում է. «Պատմության, և մասնավորապես կուլտուրայի պատմության, աշխարհագրական ներքնաշենքը (բազիսը) հանդիսանում են պատմական մեծ գետերը և նրանց այս կամ այն չափով կապող մեծ պատմական դաշտերը»[4]։ Ով փոքրիշատե ծանոթ է Լ. Մեչնիկովի՝ հիշատակված գրքին (որը լույս է տեսել հետմահու, 1889 թ.), անմիջապես կնկատի, թե ի՞նչ աստիճանի նույնական են այս երկու հեղինակների տեսակետները ինչպես «պատմության աշխարհագրական բազիսի», այնպես էլ «պատմական մեծ գետերի» վերաբերյալ։

ջին տողերում գրել են. «Պետական Հրատարակչությունը հրատարակելով հանգուցյալ Լեոյի ներկա աշխատությունը՝ նշում է, որ նրա մի շարք դրույթները ճիշտ չեն»։

[1] Լեո, Հայոց պատմություն, հատ. II, Երևան, 1947, էջ 119 (ընդգծումը մերն է — Ա. Ռ.)։

[2] Նույն տեղում, էջ 150։ «Հայոց պատմության» այս հատորի առաջաբանում միանգամայն ճիշտ է նշված, որ «իդեալիստական մեթոդոլոգիան, ուղեկցված ոչ քննադատական, առերևույթ «օբյեկտիվ», մեթոդով, հանդիսանում է ներկա հատորի առաջին հիմնական արատը», ինչպես նաև այն հանգամանքը, որ «Լեոն տուրք է տվել նաև աշխարհագրական ֆակտորի դերագնահատմանը» (Առաջաբան, էջ VI—VII, XII)։

[3] Խաչիկ Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան. Պատմական ակնարկներ, հատ. 1, Երևան, 1931, էջ 39։

[4] Նույն տեղում, էջ 47։

Ինչպես տեսնում ենք, թե՛ Գարագաշյանի ու Պալասանյանի և թե՛ Լեոյի ու Սամվելյանի շատ տեսակետները իրենց էությամբ միանգամայն համահունչ են Սոլովյովի, Կլյուչևսկու, Շչապովի և Մեչնիկովի տեսակետներին։ Սրանք, իհարկե, պատահական զուգադիպություններ չեն, այլ ապացույցն են այն բանի, որ հիշյալ բոլոր հեղինակներն էլ սոցիոլոգիական նույն ուղղության՝ աշխարհագրական դետերմինիզմի կողմնակիցներն են, որոնք սկզբունքորեն տարբեր տեսակետներ չեն արտահայտել։

Ինչո՞վ բացատրել, որ իրենց հասուն տարիքի մի դգալի մասը սովետական ժամանակաշրջանում ապրած այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսիք Լին Լևոն ու Խ. Սամվելյանը, տուրք են տվյալ աշխարհագրական դետերմինիզմի իդեալիստական, հակագիտական ուսմունքին։ Մեր կարծիքով, դա կարելի է բացատրել ո՛չ միայն բուրժուական անցյալից նրանց ժառանգություն ստացած պատմագիտական կոնցեպցիաների բեռի ճնշմամբ և Պոկրովսկու վուլգար-սոցիոլոգիական «շկոլայի» ազդեցությամբ, այլև այն հանգամանքով, որ ընդհուպ մինչև 30-ական թվականների վերջը մեզանում որոշ մտայնություն կար՝ հետևելով Գ. Վ. Պլեխանովի սխալ տեսակետին, հաշտեցման եզր որոնել ու գտնել պատմական մատերիալիզմի և աշխարհագրական դետերմինիզմի միջև։ Հայտնի է, որ այդ տարիներին մեր գրականության մեջ նույնիսկ շրջանառություն ուներ «աշխարհագրական մատերիալիզմ» հակագիտական տերմինը՝ որպես աշխարհագրական դետերմինիզմի հոմանիշ։

* * *

Աշխարհագրական դետերմինիզմի կողմնակիցների տեսակետների վերլուծությունից երևում է, որ այդ ուղղության բոլոր ներկայացուցիչներն ընդգծում են աշխարհագրական միջավայրի կամ նրա առանձին էլեմենտների վճռական, որոշիչ ուժը, որն անմիջականորեն արտահայտվում է մարդկանց հոգեբանության մեջ և սրա միջոցով, վերջին հաշվով, դառնում պատմական զարգացման հիմնական ու միակ շարժիչ ուժը։ Այսպիսով, հիմնականը համարվում է մարդկանց հոգեբանության վրա աշխարհագրական միջավայրի կատարած ազդեցությունը, իսկ որպես հասարակական պրոգրեսի վճռական գործոն ներկայացվում է մարդկանց հոգեկան աշխարհը։ Ըստ էության այս ոչ այլ ինչ է, քան եթե հասարակության զարգացման իդեալիստական տեսության տարատեսակներից մեկը, տեսություն, որի հիմնական ելակետն այն պնդումն է, թե մարդկանց հասարակական կեցությունը որոշվում է նրանց գիտակցությամբ։ Այն հանգամանքը, որ աշխարհագրական դետերմինիզմի կողմնակիցների ուսմունքի համաձայն մարդկանց գիտակցությունը ձևավորվում է աշխարհագրական պայմանների որոշիչ ազդեցությամբ, ոչ մի լական բան չի փոխում հարցի դրվածքի մեջ, այլ լոկ ստեղծում է հակագիտական իդեալիստական և զուտ հիլ մատերիալիստական ուսմունքների մի էկլեկտիկ խառնուրդ։

Աշխարհագրական դետերմինիզմի արատավորությունը դրսևորվում է նրանում, որ հասարակության կյանքի ու զարգացման հարցերը քննելիս նրա կողմնակիցները ելնում են խիստ միակողմանի դիրքերից, հասարակության զարգացման պատճառները որոնում են ոչ թե բուն հասարակության մեջ, այլ, այդ զարգացման հիմնական շարժիչ ուժը համարելով աշխարհագրական միջավայրը, հասարակության զարգացման ներքին, իմանենտ օրենքները նեն-

դափոխում են արտաքին, աշխարհագրական պատճառներով, այսպիսով հասարակության զարդացման շարժիչ ուժերը հասարակությունից բնության մեջ տեղափոխելով։

Այս ուղղության կողմնակիցները պնդում են, որ աշխարհագրական միջավայրը վերջին հաշվով որոշում է և՛ հասարակության զարդացման աստիճանը, և՛ տարբեր հասարակական կառուցվածքների միջև եղած զանազանությունները, և՛ հասարակական կյանքի տարբեր ձևերի հաջորդական հերթափոխությունները, և՛ նույնիսկ հասարակության մեջ գոյություն ունեցող ազատության աստիճանը (Մոնտեսքյո)։ Այսպիսով նրանք անթույլատրելի չափերով ուռճացնում, գերագնահատում են հասարակության նյութական կյանքի պայմաններից մեկը և այն էլ ո՛չ վճռական ու որոշիչ պայմանը, աչքաթող են անում ու անուշադիր թողնում նյութական բարիքների հասարակական արտադրության եղանակի վճռական նշանակությունը։ Այս էլ հենց նշանակում է հրաժարումն հասարակության պատմական զարդացման գիտական բացատրումից, անցում պատմության իդեալիստական ըմբռնման դիրքերը։

Աշխարհագրական դետերմինիզմը (կամ՝ աշխարհագրական ուղղություն սոցիոլոգիայում), ինչպես և հասարակական կյանքի մասին նախամարքսիստական բոլոր ուսմունքները, տալիս է հասարակական կյանքի և նրա զարդացման իդեալիստական բացատրությունը։ Նախքան պատմության մատերիալիստական ըմբռնման հայտնագործումը Մարքսի կողմից, սոցիոլոգիական բոլոր տեսությունների հիմնական արատներից մեկն այն էր, որ, ինչպես նշում է Լենինը, այդ տեսությունները «լավագույն դեպքում քննում էին մարդկանց պատմական գործունեության լոկ իդեական մոտիվները, չհետազոտելով այն, թե ինչից են առաջանում այդ մոտիվները, չըմբռնելով հասարակական հարաբերությունների սիստեմի զարդացման օբյեկտիվ օրինաչափությունը, չտեսնելով այդ հարաբերությունների արմատները նյութական արտադրության զարդացման աստիճանի մեջ»[1]։ Այդ տեսությունները դտնում էին, որ պատմական զարդացումը վերջին հաշվով հանդիսանում է մարդկանց իդեաների կամ տեսակետների, կարծիքների փոփոխման, զարդացման արդյունք։ Իսկ այն դեպքերում, երբ նրանք այդ փոփոխման ու զարդացման պատճառները բացատրելու համար դիմում էին աշխարհադրական միջավայրի ազդեցությանը, ապա բացարձակացնում էին այդ և աշխարհադրական միջավայրի վճռական ներդործության հետևանք էին համարում և՛ հասարակական կյանքը, և՛ դրա զարդացումը, և՛ հասարակական ֆորմացիաների հերթափոխությունը, և՛ քաղաքակրթության զարդացման աստիճանը։

Աշխարհադրական դետերմինիզմի էությունը բնութագրելու համար լիովին պահպանում են իրենց ուժը Լենինի խոսքերն այն մասին, թե՝ «դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից... փիլիսոփայական իդեալիզմն իմացության դծիկներից, կողմերից, երեսակներից մեկի միակողմանի, չափազանցված... զարդացումն է (փքացումը, ուռեցումը) մինչ աբսոլյուտը»[2]։ Աշխարհադրական դետերմինիզմի ներկայացուցիչների մոտ այդպիսի միակողմանիորեն չափազանցված, կտրված ու աբսոլյուտի աստիճանը բարձրացված գործոնի դերում հանդես է գալիս աշխարհագրական միջավայրը։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 57։

[2] Վ. Ի. Լենին, Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ, Երևան, 1933, էջ 423։

Աշխարհագրական դետերմինիզմի արատներից է նաև նրա մետաֆիզիկական ու ոչ պատմական էությունը։ Ելնելով աշխարհագրական միջավայրի պայմաններից և դրանց հիման վրա կառուցելով պատմական զարգացման իրենց հակադիտական կոնցեպցիան (որը առաջին հայացքից թվում է «օբյեկտիվ», քանի որ իբրև ելակետ ընդունվում է ոչ թե աստված, բացարձակ իդեան կամ ամեն ինչից անկախ մարդկային կամքը, այլ ինչ-որ նյութական բան՝ աշխարհագրական պայմանները), այդ ուղղության ներկայացուցիչները բուն իսկ աշխարհագրական միջավայրը, հասարակության զարգացման վրա նրա ազդեցության աստիճանը դիտում են որպես մեկ անգամ ընդմիշտ տրված մի բան, որը անփոփոխ է մնում բոլոր ժամանակներում և պատմական բոլոր էպոխաներում։ Լավագույն դեպքում նրանք քննարկում են միայն գոյություն ունեցողը, և ոչ թե զարգացողը, հասարակության կյանքը պատկերացնելով որպես ինչ-որ քարացած բան։ Պատմական երևույթների քննարկման հենց այս կարգի արատավոր տեսությունները նկատի ուներ Մարքսը, երբ իր նամակներից մեկում գրում էր. «Իրար զարմանալիորեն նման, սակայն պատմական տարբեր միջավայրում տեղի ունեցող անցքերը հասցնում են միանգամայն տարբեր արդյունքների։ Այդ էվոլյուցիաներից ամեն մեկն առանձին ուսումնասիրելուց և ապա միմյանց համադրելուց հետո, հեշտ է գտնել այդ երևույթն ըմբռնելու բանալին. բայց երբեք էլ չի կարելի հասնել այդ ըմբռնմանը, օգտագործելով պատմա-փիլիսոփայական որևէ ընդհանուր տեսության ունիվերսալ ագռավուկը (որը միանգամից բացատրում է ամեն ինչ, որովհետև ոչինչ չի բացատրում), որի մեծագույն արժանիքը իր վերպատմականությունն է»[1]։

Աշխարհագրական դետերմինիզմի երրորդ էական արատը նրա հայեցողական բնույթն է։ Սոցիոլոգիական այս ուղղության համարյա բոլոր ներկայացուցիչների մոտ բացակայում է հասարակության կողմից բնության վրա կատարվող ներգործուն ազդեցության, ակտիվության մոմենտը, մի բան, որ վերջին հաշվով հանգեցնում է ֆատալիզմի։

Հասարակության պատմական զարգացումը բացառապես կամ գլխավորապես աշխարհագրական գործոններից ելնելով բացատրելը նույնքան սխալ է և հակադիտական, ինչքան որ այդ զարգացման հիմքերը սուբյեկտիվ գործոնների՝ մարդկանց (աշքի ընկնող անհատների, թագավորների, զորավարների...) գիտակցության և կամքի մեջ որոնելը։ Թե՛ մեկը, թե՛ մյուսը հանդիսանում են պատմական զարգացման պրոցեսի միևնույն իդեալիստական, հակադիտական բացատրության տարատեսակները։

Վերը մենք տեսանք, որ հասարակության զարգացման միակ դիտական տեսության՝ մարքսիզմ-լենինիզմի տեսակետից աշխարհագրական դետերմինիզմը պատմական զարգացման դիտական տեսություն չէ, որովհետև հակասում է հասարակության զարգացման իրական ընթացքին և ամենևին չի բացատրում այդ զարգացումը։ Չնայած դրան, սոցիոլոգիական այդ ուղղության նշանակությունը նրա գոյության բոլոր ժամանակաշրջաններում նույնը չի եղել։ Ինչպես արդեն ասվել է, նրա առաջին տեսաբանները (մասնավորապես Մոնտեսքյոն) իրենց ուսմունքը հակադրում էին այն ժամանակ ամենակարող քրիստոնեական կրոնի թեոլոգիական կոնցեպցիաներին, և հենց այդ չափով էլ աշխարհագրական դետերմինիզմը օբյեկտիվորեն դրական դեր էր

[1] К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, изд. I, т. XV, էջ 378։

խաղում։ Հիշյալ դարաշրջանի իդեալիստական քաոսի պայմաններում, երբ անբաժան կերպով իշխում էին միջնադարյան թեոլոգիան ու խավարամոլությունը, հասարակության նյութական կյանքի պայմաններից մեկը հանդիսացող աշխարհագրական միջավայրի նշանակության վրա հենվելը ըստ ինքյան արդեն պրոգրեսիվ երևույթ էր, հանդիսանալով մի քայլ՝ հասարակական զարգացման նյութական պայմանները աստվածային նախախնամությունից դուրս, արտաքին աշխարհում որոնելու ուղղությամբ։

Հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը միանգամայն արդարացիորեն նկատել է աշխարհագրական դետերմինիզմի զարգացման սկզբնական շրջանի հենց այս պրոգրեսիվ կողմը։ Պետրոպավլովյան բերդում ծանոթանալով Բոքլի գրքին, Նալբանդյանը (որին միանգամայն խորթ էին Բոքլի ընդհանուր սոցիոլոգիական տեսակետները) բարձր գնահատական է տալիս այդ գրքին հենց այն պատճառով, որ դրա հեղինակը որոնում էր հասարակության զարգացման բնական, և ոչ թե աստվածային դրդապատճառներն ու հիմքերը։ Բոքլին ձոնված ոտանավորում («Հենրիկոս Թոմաս Բոքլի հիշատակին») նա գրում էր.

Բնությունից, անցած կյանքից
Հանում է ճիշտ օրենքներ
Եվ փրկում է դիպվածներից
Մարդկության կյանքի գործեր։

. . . . . .

Նա կապում է պատմությունը
Բնության հետ պինդ կապով,
Ցանցառ միստիկի բաժնածը՝
Մարմին, ոգի, մի օղով։
«Ոգին մարմնին է համեմատ,
Արդյունք բնությա՛ն է մարմին»։
Բնության դարձավ հոգին հնազանդ,
Հոգս միստիկի դյխին[1]։

Իր հետագա զարգացման ընթացքում աշխարհագրական դետերմինիզմը վերածվեց դաղութային թալանը քողարկելու հարմար միջոցի, իսկ իմպերիալիզմի էպոխայում դարձավ մի ռեակցիոն ուսմունք, որի նպատակն է մի կողմից պայքարել հասարակական զարգացման իսկական գիտական տեսության՝ պատմական մատերիալիզմի դեմ, իսկ մյուս կողմից՝ «տեսականորեն» հիմնավորել իմպերիալիստական էքսպանսիան[2]։

* * *

Աշխարհագրական դետերմինիզմի լիակատար սնանկությունը, նրա իդեալիստական, մետաֆիզիկական ու հայեցողական էությունն ու էքսպանսիոնիստական նպատակասլացությունը մերկացվեցին հասարակական զարգաց-

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, Երևան, 1945, էջ 105,

[2] Աշխարհագրական դետերմինիզմի էվոլյուցիայի մասին (ընդհուպ մինչև գերմանա-ֆաշիստական գեոպոլիտիկան և ժամանակակից ամերիկյան գեոստրատեգիան) հանգամանորեն խոսվում է մեր «О роли географической среды в развитии общества» աշխատության մեջ (Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1956)։

ման մարքս-լենինյան դիալեկտիկա-մատերիալիստական ուսմունքի կողմից։ Մարքսիզմ-լենինիզմը ցույց տվեց, որ աշխարհագրական դետերմինիզմը ոչ մի ընդհանուր բան չունի պատմական մատերիալիզմի հետ և հանդիսանում է պատմության իդեալիստական ըմբռնման լոկ մի տարատեսակը։

Միմիայն պատմական մատերիալիզմի առաջացումից հետո սոցիոլոգիան դարձավ գիտություն։ Պատմական մատերիալիզմը տեսականորեն պսակազերծ արեց հասարակական կյանքի իդեալիստական ըմբռնումը, որի համաձայն պատմության շարժիչ ուժը հանդիսանում են մարդկանց իդեաները, գիտակցությունը, կամքը։ Մարքսն ու Էնգելսը ցույց տվեցին, որ ո՛չ թե հասարակական գիտակցությունն է պայմանավորում հասարակական կեցությունը, այլ, ընդհակառակը, մարդկանց հասարակական կեցությո՛ւնն է որոշում նրանց հասարակական գիտակցությունը։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները ապացուցեցին, որ նյութական բարիքների արտադրության եղանակը (որ իրենից ներկայացնում է հասարակության արտադրողական ուժերի և նյութական բարիքների արտադրության պրոցեսում մարդկանց միջև ստեղծվող արտադրական հարաբերությունների միասնության մարմնավորումը) հանդիսանում է այն հիմքը, որի վրա բարձրանում են մարդկանց բոլոր մյուս հարաբերությունները, և ցույց տվեցին, որ հասարակության ողջ զարգացումը վերջին հաշվով որոշվում է արտադրության եղանակով։

Եթե արտադրության եղանակը հանդիսանում է հասարակության նյութական կյանքի պայմանների սիստեմում այն գլխավոր ուժը, որը վերջին հաշվով որոշում է հասարակության բնույթը և որի փոփոխման շնորհիվ համապատասխան փոփոխություններ են կատարվում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,— եթե արտադրության եղանակը հանդիսանում է հասարակության նյութական կյանքի պայմանների վճռական գործոնը, ապա դա, իհարկե, չի նշանակում, թե ժխտվում է այդ պայմանների մասը կազմող մյուս երկու էլեմենտների՝ աշխարհագրական միջավայրի և ազգաբնակության աճի ակտիվ դերը հասարակության զարգացման մեջ։

Մասնավորապես, հասարակության զարգացման մեջ աշխարհագրական միջավայրի դերի պարզաբանումը տեսական մեծ նշանակություն ունի, քանի որ դա հնարավորություն է տալիս գիտականորեն ճիշտ վերլուծել և ըմբռնել հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքները։ Առանց ուսումնասիրելու այն հարցը, թե ինչպիսի՛ փոխհարաբերություններ ու փոխազդեցություններ գոյություն ունեն հասարակության և աշխարհագրական միջավայրի միջև, անհնար է ճիշտ հասկանալ հասարակության նյութական կյանքի զարգացումն ու դրա օրինաչափությունները, անհնար է ըմբռնել այն բազմաթիվ պրոցեսների էությունը, որոնք կատարվում են աշխարհագրական միջավայրում մարդկանց գործունեության հետևանքով, ինչպես նաև բացահայտել աշխարհագրական միջավայրի դերը հասարակության կյանքում։

Ամեն մի հասարակության գոյության հիմքը աշխատանքն է, որի արտադրողականությունը որոշակիորեն կապված է աշխարհագրական միջավայրի պայմանների հետ։ Այդ կապը հատկապես ուժեղ ու անմիջական է եղել հասարակության զարգացման ավելի վաղ դարաշրջաններում։ Աշխարհագրական միջավայրի վրա հասարակության ազդեցության աստիճանը միշտ կախված է արտադրողական ուժերի զարգացման աստիճանից և հասարակական ձևից։

Մյուս կողմից, աշխարհագրական միջավայրի նշանակությունը արտադրողական ուժերի, մասնավորապես արտադրության գործիքների, տեխնիկայի զարգացման համար այն է, որ աշխարհագրական միջավայրն է տալիս և՛ արտադրության գործիքների ստեղծման համար անհրաժեշտ նյութերը (փայտը, քարը, մետաղները և այլն), և՛ այն ուժերը, որ գործողության մեջ են դնում այդ գործիքները (ջուրը, քամին, շոգին, էլեկտրականությունը, միջուկային էներգիան), և՛ այն նյութերը, որոնցից մարդիկ արտադրության գործիքների միջոցով արտադրում են իրենց կյանքի համար անհրաժեշտ բոլոր նյութական բարիքները (սնունդ, հագուստ, բնակարան և այլն)։

Հասարակության նյութական կյանքի զարգացման վրա աշխարհագրական միջավայրի ազդեցությունը կարող է արտահայտվել և արտահայտվում է ոչ թե անմիջականորեն, այլ միայն արտադրողական ուժերի միջոցով[1]։ Բայց թեև աշխարհագրական միջավայրը ազդում է արտադրողական ուժերի, առաջին հերթին՝ արտադրության գործիքների, տեխնիկայի զարգացման վրա, օժանդակելով կամ, ընդհակառակը, դժվարացնելով այն,— այնուամենայնիվ նրա ազդեցությամբ չի որոշվում այդ զարգացումը, քանի որ վերջինս կախված է նախ և առաջ հասարակական արտադրության ձևից, նրա պահանջներից, որոնք պայմանավորված են ոչ թե աշխարհագրական, այլ հասարակական գործոններով։

Միմիայն հասարակական արտադրության կարիքներն են, որ առաջ են բերում ու խթանում արտադրողական ուժերի փոփոխություններն ու կատարելագործումը։ Այսպես, վերջին հաշվով փոխանակության պրոցեսը արագացնելու հասարակական պահանջն ու անհրաժեշտությունն էր, որ կյանքի կոչեց շոգեքարշն ու շոգենավը, ջերմաքարշն ու էլեկտրաքարշը, ավտոմոբիլն ու օդանավը։ Հասարակության տարբեր մասերի միջև անհրաժեշտ կապերի արագացման հասարակական պահանջի հետևանքով երևան եկան հեռախոսն ու հեռագիրը, ռադիոն և հեռուստատեսությունը։ Աշխատանքի արտադրողականության բարձրացման հասարակական անհրաժեշտության հետևանք են արտադրական բազմաթիվ կարևոր պրոցեսների և ամբողջ արտադրական ճյուղերի ավտոմատացումն ու տելեմեխանիզացիան և մեր դարաշրջանի այնպիսի մի հրաշալիքը, ինչպիսին է էլեկտրոնային հաշվիչ մեքենան։ Կարճ ասած, մեր ժամանակակից ողջ տեխնիկան՝ իր մեքենայական հսկա զինվածությամբ, հզոր էներգետիկ տնտեսությամբ, տրանսպորտի և կապի լայնածավալ միջոցներով, հանդիսանում է նյութական բարիքների արտադրության ասպարեզում հասարակության օրըստօրե աճող պահանջմունքների հետևանքը։

Այս ամենը մեզ հետաքրքրող հարցի՝ հասարակության և աշխարհագրական միջավայրի փոխհարաբերության պրոբլեմի միայն մեկ կողմն է։ Երբեք չի կարելի մոռանալ այդ հարցի մյուս, ոչ սակավ կարևոր ու էական կողմը,— այն, որ արտադրական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, արտադրողական ուժերի կատարելագործման և աճի, տեխնիկայի առաջադիմության հետ անվետեղ մեծանում են աշխարհագրական միջավայրի վրա մար-

[1] Այստեղ մենք դանդ ենք առնում աշխարհագրական միջավայրի առանձին էլեմենտների կամ կողմերի անմիջական ազդեցությունը մարդկանց հոգեկան աշխարհի վրա, որովհետև նախ՝ դա մեծ նշանակություն չունի նյութական արտադրության զարգացման համար և ապա՝ պատմական զարգացման ընթացքում, արտադրողական ուժերի կատարելագործման պրոցեսում, արագորեն թուլանում է։

դու ազդեցության մասշտարները, արագանում է մարդկային աշխատանքի շնորհիվ աշխարհագրական միջավայրի վերափոխման տեմպը, բարձրանում է բնության վրա մարդկանց ազդեցության աստիճանը։ Այլ կերպ ասած, հասարակության ազդեցության տակ ինքը՝ աշխարհագրական միջավայրը փոխում է իր կերպարանքը։ Աշխարհագրական դիտությանը հայտնի են հազարավոր փաստեր այն մասին, թե ինչպես դարերի ընթացքում, մարդկային աշխատանքի շնորհիվ, մինչև անճանաչելիության աստիճան փոխվել է ընդարձակ տերիտորիաների և նույնիսկ ամբողջ երկրների ու աշխարհամասերի լանդշաֆտը, նրանց նախկին «բնական տեսքը»։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ինչպես աշխարհագրական միջավայրի վրա հասարակության ազդեցության աստիճանը, այնպես էլ այդ միջավայրի դերը հասարակության զարգացման գործում միևնույնը չեն եղել ողջ պատմության ընթացքում։ Դրանք փոփոխվել են այն չափով, ինչ չափով փոփոխվել ու զարգացել են արտադրողական ուժերն ու նրանց համապատասխանող արտադրական հարաբերությունները։ Ըստ որում ինչքան ավելի դանդաղ էին զարգանում արտադրողական ուժերը, ինչքան քիչ էր մարդկանց կուտակած արտադրական փորձը, ինչքան անզարգացած էր արտադրության եղանակը, այնքան ավելի երկարատև էր այն ժամանակամիջոցը, որի ընթացքում հող էր նախապատրաստվում արտադրողական ուժերի մեծ փոփոխությունների համար և, հետևապես, հասարակության ու աշխարհագրական միջավայրի փոխհարաբերությունների միջև խոշոր տեղաշարժերի համար։ Այսպես, օրինակ՝ մինչև որ մարդը քարե կացնից ու մահակից հասավ կրակի, շատ ավելի ուշ՝ նաև շոգու օգտագործմանը, անցան տասնյակ ու հարյուր հազարավոր տարիներ, մինչդեռ շոգու և էլեկտրականության դարաշրջանների միջև ընկած է ընդամենը երկու հարյուրամյակ, իսկ էլեկտրականության և միջուկային էներգիայի հայտնաբերման ու օգտագործման դարաշրջանների միջև՝ հարյուր տարուց էլ պակաս։

Պատմականորեն որոշակի ամեն մի արտադրաեղանակ որոշում է և՛ աշխարհագրական միջավայրի ազդեցության աստիճանը, նրա նշանակությունը հասարակության զարգացման համար, և՛ այդ միջավայրի վրա հասարակության ազդեցության, գերիշխանության աստիճանը, այսինքն՝ աշխարհագրական միջավայրը վերափոխելու և օգտագործելու ունակ հնարավորության աստիճանը։ Այլ կերպ ասած, հասարակության զարգացման մեջ աշխարհագրական միջավայրի դերն ու նշանակությունը կախված են արտադրողական ուժերի զարգացման մակարդակից և այդ ուժերին համապատասխանող արտադրական հարաբերությունների բնույթից և իրենցից չեն ներկայացնում մեկ անգամ ընդմիշտ տրված ու անփոփոխ մեծություններ։

Այսպիսով, մեզ հետաքրքրող հարցին պատմական մոտեցումը ցույց է տալիս, որ աշխարհագրական միջավայրի դերն ու ազդեցությունը հասարակության զարգացման վրա կախված են նյութական արտադրության զարգացման մակարդակից և միևնույնը չեն հասարակության արտադրողական ուժերի զարգացման տարբեր աստիճանների ժամանակ։ Հասարակության զարգացման տարբեր էտապներում աշխարհագրական միջավայրի դերը տարբեր է, և ոչ թե միատեսակ։ Մի կողմից՝ աշխարհագրական միջավայրի վրա մարդու (հասարակության) ազդեցության բնույթը, ձևերը, ուժը և աստիճանը, իսկ մյուս կողմից՝ այդ միջավայրի ազդեցությունը հասարակության զարգացման վրա

պատմական տարբեր էպոխաներում տարբեր են եղել։ Մարդկային հասարակության զարգացման ողջ պատմական պրոցեսի ուսումնասիրությունը անխուսափելիորեն բերում է այն միակ ճիշտ, գիտական օրինաչափության հայտնաբերմանը, որ ինչքան ավելի խորն ենք գնում դեպի հին ժամանակաշրջանները, այսինքն՝ ինչքան ցածր է ու պրիմիտիվ հասարակական արտադրությունը, այնքան մարդը ավելի է կախված շրջապատող աշխարհագրական միջավայրից, այնքան ավելի ուժեղ է աշխարհագրական միջավայրի անմիջական ազդեցությունը հասարակության վրա և, ըստ այդմ էլ, թույլ է ու աննշան այդ միջավայրի օգտագործումն ու ենթարկումը մարդու կողմից։ Ընդհակառակը, ինչքան բարձր է հասարակական արտադրության մակարդակը, ինչքան ավելի կատարյալ է արտադրաեղանակը, ինչքան զարգացած են հասարակության արտադրողական ուժերը, ինչքան զարգացած է տեխնիկան, այնքան ավելի թույլ է հասարակության անմիջական կախումը աշխարհագրական միջավայրի ազդեցությունից և, ըստ այդմ էլ, բարձր է հասարակության կողմից աշխարհագրական միջավայրի օգտագործման, վերափոխման ու ենթարկման մակարդակը։

Արտադրության զարգացման ավելի բարձր աստիճաններում հասարակության կապերը աշխարհագրական միջավայրի հետ դառնում են ավելի ու ավելի բարդ, բազմակողմանի, բազմատեսակ ու նրբին, թեպետ և հասարակությունը անմիջականորեն ավելի քիչ է կախված աշխարհագրական միջավայրի պայմաններից։ Հասարակության զարգացման ընթացքում, մի կողմից, մարդկությունը աստիճանաբար ազատագրվում է բնության կույր ուժերի գերիշխանությունից, իսկ մյուս կողմից՝ ավելի ու ավելի մեծանում է աշխարհագրական միջավայրի օգտագործումը մարդու կողմից։ Հենց այս վերջին առումով էլ՝ մեծանում է աշխարհագրական միջավայրի նշանակությունը հասարակության համար։

Այսպիսին է հասարակության և աշխարհագրական միջավայրի փոխհարաբերության դիալեկտիկան։ Հասարակության զարգացման պրոցեսում նրա անմիջական կախումը աշխարհագրական միջավայրից գնում է վարընթաց գծով (այսինքն՝ մարդը աստիճանաբար դառնում է բնության տերը), մինչդեռ աշխարհագրական միջավայրի վերափոխումը, օգտագործումը, ենթարկումը հասարակության կողմից զարգանում է վերընթաց գծով։ Եթե նախնադարյան-համայնական կարգերում մարդը մաքսիմալ չափերով կախված է եղել աշխարհագրական միջավայրից և մինիմալ չափերով է օգտագործել նրա ուժերն ու առարկաները, ապա ապագա կոմունիստական հասարակարգում գոյություն կունենա միանգամայն հակադիր փոխհարաբերություն, այն է՝ հասարակության մինիմալ անմիջական կախում աշխարհագրական միջավայրից և նրա ուժերի ու առարկաների մաքսիմալ օգտագործում, վերափոխում ու ենթարկում։

ГЕОГРАФИЧЕСКИЙ ДЕТЕРМИНИЗМ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

А. М. ВОСКАНЯН

(Резюме)

В статье дается краткий очерк исторической эволюции географического детерминизма, с позиций марксизма-ленинизма анализируется это идеалистическое направление в буржуазной социологии и показывается, что в период своего наибольшего распространения, во второй половине XIX и начале XX вв., оно имело своих приверженцев также среди армянских ученых. На основании анализа ряда работ наиболее выдающихся армянских географистов (историков А. Гарагашяна, Ст. Паласаняна, Лео и Х. Самвеляна) показывается идентичность их взглядов на роль географической среды в жизни и развитии общества основным мыслям крупнейших русских (С. Соловьев, А. Щапов, В. Ключевский, Л. Мечников) и западноевропейских (Монтескье, Риттер) представителей этого направления в социологии. Показывается также, что упомянутые армянские сторонники географического детерминизма, как и названные выше русские ученые, не делали из своего учения никаких расистских и экспансионистских выводов, которые были свойственны ряду западноевропейских географов XIX—XX вв. (Бокль, Ратцель, немецкие и американо-английские геополитики). В конце статьи кратко излагается марксистское учение о роли географической среды в общественном развитии.